Հաստատված է՝
Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի
Գիտխորհրդի 2025 թ. դեկտեմբերի 22-ի նիստում
Արձանագրություն № 01-12/25

Գիտխորհրդի նախագահ, ռեկտոր՝

Մ.Գ.Բարսեղյան

ԿԱՐԳ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1.Սույն կարգը սահմանում է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ ՃՇՀԱՀ) աշխատողների գիտահետազոտական աշխատանքների համար լրավճարների տրամադրման կարգը և պայմանները, ինչպես նաև լրավճարների չափերը՝ համաձայն սույն կարգի հավելվածի:

2. Լրավճարները տրամադրվում են հետևյալ աշխատանքների կատարման համար.

1) որոշակի շտեմարաններում ընդգրկված պարբերականներում և ՃՇՀԱՀ «Journal of Architectural and Engineering Research» և «Գիտական աշխատություններ» պարբերականներում հոդվածի հրապարակում, այդ թվում՝ արտերկրի գիտակրթական կազմակերպություն ներկայացնող հեղինակի հետ համահեղինակությամբ,

2) առնվազն 5 տպագրական մամուլով մենագրության հրատարակում,

3) ՃՇՀԱՀ ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների գիտական ղեկավարում և խորհրդատվություն՝ ուսումնառության սահմանված ժամկետում ատենախոսությունը պաշտպանելու պարագայում՝ ԲԿԳԿ-ի կողմից գիտական աստիճանի շնորհման մասին որոշում կայացնելուց հետո,

4) ՃՇՀԱՀ հիմնական աշխատակից հանդիսացող ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների կողմից ատենախոսության պաշտպանություն ուսումնառության սահմանված ժամկետում՝ ԲԿԳԿ-ի կողմից գիտական աստիճանի շնորհման մասին որոշում կայացնելուց հետո,

5) համալսարանական գիտական սեմինարների իրականացում:

3.Սույն կարգի 2-րդ կետի 1-2 ենթակետերում նշված հրապարակումների համար լրավճարները տրամադրվում են ՃՇՀԱՀ այն աշխատողներին, ովքեր հրապարակված հետազոտությունում որպես իրենց աշխատավայր նշել են ՃՇՀԱՀ-ն և nuaca.am համացանցային տիրույթում գրանցված իրենց էլեկտրոնային փոստի հասցեն:

4.Scopus շտեմարանում ընդգրկված պարբերականների քառորդները որոշվում են SCImago Journal & Country Rank պորտալի ամսագրերի դասակարգման սանդղակին համապատասխան: Scopus շտեմարանում ընդգրկված այն պարբերականներում հրապարակված հոդվածները, որոնց քառորդները դեռևս հստակեցված չեն, ընդունվում են Q4-ին համարժեք:

5.«Web of Science» Core Collection շտեմարանում ընդգրկված պարբերականների քառորդները որոշվում են JCR-ի քառորդներին համապատասխան (այն պարբերականները, որոնց քառորդները դեռևս հստակեցված չեն, ընդունվում են Q4-ին համարժեք):

6.Եթե հոդվածի հեղինակը որպես իր աշխատավայր նշել է մեկից ավելի կազմակերպություն, ապա նրան վճարվում է սահմանված գումարի կեսը:

7.Կոլեկտիվ մենագրության գլխի (ենթագլխի), քարտեզի, արտոնագրի հրատարակումը համարվում է համապատասխան շտեմարանում ընդգրկված հոդվածին համարժեք:

8.Համալսարանական սեմինարների թեմաները համաձայնեցվում են ՃՇՀԱՀ գիտատեխնիկական խորհրդի հետ:

9.Սույն կարգի հավելվածի 1-7 կետերով սահմանված լրավճարները տրամադրվում են ՃՇՀԱՀ աշխատակցի դիմումի հիման վրա: Դիմումին կցվում են լրավճարը հիմնավորող փաստաթղթեր կամ տվյալներ:

10.Դիմումին կցված նյութերի հավաստիությունը ստուգվում է ՃՇՀԱՀ գիտության վարչության կողմից, որից հետո ՃՇՀԱՀ ռեկտորին է ներկայացվում լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

11.Սույն կարգին համապատասխան իրականացված գիտական աշխատանքների հաշվառումը և տեղեկատվության պահպանումն իրականացնում է ՃՇՀԱՀ գիտության վարչությունը:

12.Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

13.Սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել ՃՇՀԱՀ գիտական խորհրդի 2023թ. դեկտեմբերի 23-ի N°01-12/23 նիստի արձանագրությամբ հաստատված՝ «ՃՇՀԱՀ աշխատողների գիտահետազոտական աշխատանքների համար լրավճարների տրամադրման և հաշվարկման կարգը»:

Գիտական քարտուղար Լ.Հ.Լևոնյան
22.դեկտեմբերի, 2025թ.
գիտխորհրդի որոշում N°01-12/25

ՀԱՎԵԼՎԱԾ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի աշխատողների գիտահետազոտական աշխատանքների համար լրավճարների տրամադրման կարգի

Հ/Հ	Գիտահետազոտական գործունեության (աշխատանքի) բնույթը		Միավոր աշխատանքի գինը (ՀՀ դրամ)	Լրավճարի տրամադրման սկզբունքները
1	Հոդվածի հրապարակում Scopus կամ «Web of Science» Core Collection շտեմարաններում ընդգրկված պարբերականներում և գիտաժողովների նյութերի կազմում՝ ըստ քառորդների	Q1	600.000	Գումարը բաժանվում է ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
		Q2	400.000	
		Q3	200.000	
		Q4	100.000	
2	Հոդվածի հրապարակում «Journal of Architectural and Engineering Research» պարբերականում		200.000	Գումարը բաժանվում է ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
3	Հոդվածի հրապարակում «ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ» պարբերականում		20.000	Գումարը բաժանվում է ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
4	Լրացուցիչ՝ սույն աղյուսակի 1-3 կետերից որևէ մեկի պահանջներին բավարարող հոդվածի հրապարակում արտերկրի համահեղինակ/ներ/ի հետ		50.000	Գումարը բաժանվում է ՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
5	Մենագրության հրատարակում «Web of Science» գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի Book Citatin Index հրատարակիչների կամ Scopus շտեմարանի կողմից ինդեքսավորված գրքերի ցանկում		200.000	Գումարը բաժանվում էՃՇՀԱՀ աշխատակից համահեղինակների թվին
6	Սահմանված ժամկետում ատենախոսությունը պաշտպանած ՃՇՀԱՀ ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների գիտական ղեկավարում և խորհրդատվություն		200.000	Գումարը տրամադրվում է գիտական ղեկավարին կամ խորհրդատուին՝ ԲԿԳԿ-ի կողմից գիտական աստիճանի շնորհման մասին որոշում կայացնելուց հետո
7	ՃՇՀԱՀ ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների կողմից ատենախոսության պաշտպանություն սահմանված ժամկետում		200.000	Գումարը տրամադրվում է գիտական աստիճան ստացած ՃՇՀԱՀ աշխատակցին՝ ԲԿԳԿ-ի կողմից գիտական աստիճանի շնորհման մասին որոշում կայացնելուց հետո
8	Համալսարանական գիտական սեմինարների իրականացում		60.000	Գումարը տրամադրվում է սեմինարն իրականացնող/ներ/ին՝ գիտության վարչության ղեկավարի զեկուցագրի հիման վրա՝ կիսամյակային պարբերականությամբ